



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material





891.99

Բ - 72

ՔՆ Ա. Բ

Ար.

ՀԱՅԱՍՏԱՆԻ

1008
38126

— 1864 —

ԿՈՍՏՈ. ՆԴՆՈՒ. ՊՈԼԻՍ

Ա. ՀԱՄԱԳԳԱԱՅԻՆ ՏՊՈ. ԲԱՆ

ԻՐԱՄ ԱԱԼԻ ԽԱՆ ԹԻՒ 34

926-242 38240 ab.

US

2001

21048-60

ՅԱՌԱՋԱԲՈՆ

Պարծանք կուրախանանք այսօր՝ Ազգերնուս մէջ ստ-
դորութեամբ սպրթած օտարաձայն անալիերդերուն անհե-
տանալը տեսնելով :

Բանասիրութիւնը ճաշակ է . այն ազգերն որ գեղեցիկ
դպրութեանց ճաշակ չունին վայրենի են, և ընդհանուրէն
բարբարոս մակդիկն ընդունելու դատապարտուած . թո-
ղունք անցեալ ժամանակները , մեր դարուն , մեզի խիստ
մերձագոյն օրերէն 'ի վեր . այսինքն՝ քսան և երեսուն տար-
ուընէ 'ի վեր՝ Ազգերնուս եռանդն ու շարժումը ի գողագո-
հը Եսաւիսն կը նկրտի , և անտարակոյս ենք՝ որ քանի ինք ,
այդ վսեմ զգացմունքէն չհեռանայ , նոյնքան աւելի՝ պիտի
արդիւնաւորին իր ճիգերն : Ասոր մէծ ապացոյց են գեղե-
ցիկ դպրութեանց ճաշակը , բանասիրութեան իր մէջ օր
քան զօր զարդանալը, որուն անանջատ հետևանքն է հաստա-
տուն դիտութեանց ձեռնարկութիւնը որ լրումն և մայր է
քաղաքակրթութեան .

Բանասիրութեան քոյրն է երաժշտութիւնը : Ազգեր-
նիս գիտութեան այս ճիւղին մէջ ոչ սակաւ արդիւնաւորե-
ցաւ . , այսօր , Հայն ալ իր դրացի ազգերուն հետ բաղ-
դատուելով իրաւունք ունի , Արխաներովը , Երանեաներով ,

Դաշտեաններովիւս Չուխաչեաններով պարծիլ : Դնա՛, Հայու
մըտուն .. մատաղերամ մանկաններէն մինչև ցչափահամ,
ուրեշ երդ չես լսեր բերներնուն՝ եթէ ոչ Ազգային :

Ազգերնուս այս եռանդը տեսնելով . մենք աւ մեր կող
մանեշ երիտասարդութեան այդ գովելի ճառշակին, օդաւեա
ծառայութիւն մը մատուցանելու նպատակաւ , ահա Հայ.
րենի Քնարս արդէն եղած երդերուն ընտրելադոյներէն ,
և նոր 1864 Մայիս 24 Ազգային Սահմանադրութեան
ըսրուդ տարեդարձին երգուելիքներէն հաւաքելով սիրելի
Ազգերնուս կ'ընծայենք . յուսալով՝ որ արդի տաղանդներուն
դատաղութեանը առջին՝ ոչ դատապարտութեան , այլ սիրա.
լիք ընդունելութեան հաշտ ակնարկութիւնը կ'ստանանք ,
որովհ մեր աշխատութիւնը կը պատկուի :

ԱՐԵԱԼՈՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ

Ի ԶՈՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁ

ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Հայաստանեայց մեւ ախսրագին օրերը
Փարատեցան, նոր հոդիղոն բացուեցաւ.
Մեզի համար չեն այն մթին ամպերը,
Զի արշալոյս պայծառ դարձեալ փայլեցաւ:

Յուրախոթիւն, ո՛ Հայեր,
Որդիք Հայկայ և՝ Արամայ.
Չեղ փառաւոր պողոտայ,
Հորդեն երկինք լուսաբեր:

Դուք դիւցազանց ճետեք, Հայեր, քաջեղիք,
Յառաջ դայէք, յառաջ, ահա՛ ասպարէղ.
Մայր Հայաստան ձեղ կը նայի աւասիկ,
Մեղմացուցէք իր արտաստքն աղեկէղ:

Յշուառոթեան բաժակը
Մինչեւ տակը քամեցինք.
Աքդ ուղարկեց մեղ երկինք
Աւետաբեր հրեշտակը:

Այն հրեշտակը որ Վարդանայ վեհ ողին
ի' Աւարայրի նահատակաց սուրբ գունդը
Ներկայացոյց Ամենակալ Արքային ,
Մինչ կրակապաշտ Պարսիկն երթայր ան-
դունդը :

Այդ՝ ձեզ կուգայ , հայկագունք ,
Նոր աւետիս բերելով ,
«ԶԵՇ՝ այլ ձեզ բաղդըն խռով .
Դո՛ւք քաջարեաց , ո՛ մանկունք» :

Օ՛ն խայտացէք , Գողթան երգեր թո՛ղ հըն-
չեն ,
Թո՛ղ արձագանդ տան եւ հովիտք : Բըլուր-
ներ ,

Մեր սիրտերը , որ սուրբ սիրով կը տրոիեն ,
Թո՛ղ միանան ու կորնչի անտուրը հեռ :

Ի' ամեն տարի ցնծութեամք ,
Մեք այս շքեղ հովտին մէջ .
Հեշտին պարուց ելեւէջ ,
Ընեմք դարձեալ միութեամք :

Մ Ի Ռ Ի Թ Ի Ւ

Ի Զ Ո Ր Ի Ո Ր Դ Տ Ա Ր Ձ

Ա Զ Գ Ա Յ Ի Ն Ս Ա Հ Մ Ա Դ Ր Ո Ւ Թ Ե Ա Ն

Ո՛չ զուարթ գարուն, ո՛չ օր մի սիրուն,
Եկաւ ու պարզեց մեղ այդն Հայութեան .
Որ դեղածիծաղ ժպտէր խնդագոյն ,
Քան սուրբ արշալոյս Սահմանադրութեան ,

Որ առաւօտեց Հայոց սրտերուն ,
Սէր եւ Միութիւն :

Ո՛չ Արարատայ աւերակներէն ,
Միրավառ արեւ ծագեց կենսական .
Ո՛չ Մասսի հնցած ծերուկ ծոցերէն ,
Քան զանբիծ արեւ Սահմանադրութեան ,

Որ ելաւ ծագեց Հայոց սրտերուն
Սէր եւ Միութիւն :

Յայն արիւնաներկ վայրերն ուր մէկիկ ,
Մէկիկ անկան փառք Հայոց Ազգութեան .
Ո՛չ շնչեաց հովիկ մի սրտագովիկ ,
Քան զանուշ զեփիւռ Սահմանադրութեան ,

Որ հեշտիկ փչեց Հայոց սրտերուն,
Սէր եւ Միութիւն .

Ի գլխակորիկ շուշանիկն ու վարդ ,
Որ ՚ի սղապատ հովիսն Աթինեան
Ոչ երգեաց ընտւ թուչնիկ մի զուարժ ,
Քան սիրուն սոխակ Սահմանադրութեան ,

Որ իջաւ երգեց Հայոց սրտերուն ,
Սէր եւ միութիւն .

Ի պաղուկ լեռանց ձիւնապատ ծայրէն ,
Չ'իջան առուակներ արծաթանաման .
Ոչ վճիռ գետեր հեղիկ խոխոջեն ,
Քան զովուկ նեկտար Սահմանադրութեան ,

Որ վազեց յորդեց Հայոց սրտերուն ,
Սէր եւ Միութիւն .

Գարուն է եկեր Հայութեան ի դաշտ ,
Շլեր ու ծաղկեր Սէրն ու Միութիւն .
Ում Աստւած վերէն ժաղոելով ի հաշտ ,
Տուաւ պարդեւեց Սահմանադրութիւն :

Որ նա պիտի տայ Հայոց սրտերուն ,
Կեանք ու զօրութիւն :

ԵՂԲԱՅՐ ԵՄՔ ՄԵՔ

Ի բիւր ձայնից բնութեան շըքեղ
Թէ երգք թռչին սիրողաբար
Սատունք կուսին ամենագեղ
Թէ որ զարնեն վախուկ քընար
Չունին ձայն այնքան մի սիրուն
Քան զանձկալի եղբայր անուն :

Տո՛ւր ինձ քու ձեռքդ եղբայր եմք մեք
Ուր մըրկաւ էինք զատուած
Բաղդին ամեն ոխ չարանենդ
Ի մի համբոյր ցրուին ի բաց

Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն
Քան զանձկալի եղբայր անուն

Երբ ալեւոր Մայր Հայաստան
Տեսնէ զորդիս իւր քովէ քով
Սրտին խորունկ վէրքըն դաժան
Քաղցր արտասուաց բուժին ցողով :

Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն
Քան զանձկալի եղբայր անուն :

Մէկտեղ լացինք մենք ի հընում . . .
Եկէք դարձեալ յար անքաժան

խառնենք զարտօսը եւ ղինտում

Ո՞ բազմածնունդ ըլլայ մեր ջան

Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն

·Բան զանձկալի Եղբայր անուն .

Մէկտէղ հոգնինք մէկտէղ ցանենք

Մէկտեղ թափին մեր քրտինքներ

Ըղհունձ բարեաց յերկինս հանենք

Որ կեանք առնուն Հայոց դաշտեր .

Ծնդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն

·Բան զանցկալի Եղբայր անուն .

Մ . ՊԵՏՐՈՎԱՆԵԱՆ

Ի ՎԵՐՍ. ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ

Ա.ԶԳ.Ա.ՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Ի զուր ամսլերն որոտացին

Ու ամենուն սիրու դող առաւ ,

Ի զուր Հրեշտակ Մասեաց սարին

Հայոց բախտին վրայ լացաւ .

Սեւ փոթորկաց մէջէն որավար

Տեսէք ի՞նչպէս կ'ելլէ պայծառ

Ու գայ ցնծալով
Ընծայ բերելով
Բիւր երջանկութիւն
Սահմանադրութիւն
Սահմանադրութիւն :

Ողջոյն աւուրն այն գերապանծ
Ուր բարձրացաւ 'ի լոյս յաղթող
Արդարութեան եւ իրաւանց
Եւ Ազգութեան յաւերժ կոթող
Արկողն հիմունս անդնդալիր
Եւ մեծ գործոյն հանդիսադիր

կուդայ ցնծալով
Ընծայ բերելով
Բիւր երջանկութիւն
Սահմանադրութիւն
Սահմանադրութիւն

Կա բարձրացաւ , ու սեւադէմ
Ատելութեան խրոխտ ամքարտակ
ինկաւ կործան , ու լուսաճեմ
Թըռաւ առ մեզ սէր անուշակ .
Ու զամքարտակն այն խորտակեց

Ու զսէրն անուշ մեղի խրկեց

Կուգայ ցնծալով եւայլն :

Ո՞հ, բնագաւառ մեր Հայաստան
Գերեզմանաց դու հայրենիք,
Նոյա վերայ փըշոց փոխան
Բուսնին դըւարթ հոյլ վարդենիք
Ահա ցաւած ճակտէդ թառամ
Կաղել պըսակ մի անթառամ

Կուգայ ցնծալով, եւայլն :

Միթէ տեսնէք դոք հեռըւանց
Հայոց օրաթեւ մեծ ապագայ
Ուրոյ վերայ յԵրկնից բարձանց
Փայլէ հրեշտակ ասողըն Հայկայ .
Յայն ասպարէկ մեզ տալ հրաւեր
Եւ առաջնորդ աւետարեր

Կուգայ ցնծալով . եւայլն :

Մ. ՊԵՇԱՐԹԱՎԱՐԵԱՆ

ՊԱՌԱԳՈՒԽ ԽՏՆ ԱՌ ԼՈՒ ՍԻՅ

Կուազեալ կենաց իրուեւ յոյս
Մութ եւ տխուք ես ո՛ կոյս
Ելել լուսին—ո՛հ եւ դուն—
Սիրո մի ունիս զգայուն ,
Ազգ մի թշուառ հայրենիք
Ար քող առեր ես զամալիկ :

Բնութիւն գեղոյդ երաժիշտ
Քեզ աստեղաց հոյլք նաժիշտ
Ի' անհուն սիրուն ժըպիտ մի
Կարգեց դշխոյ զքեզ երկնի
Ցողէ նշոյլդ տխրանոյշ
Պանդուխտ հոգւոյս ցաւոց բոյժ :

Ո՛հ վշրեցան սիրոս ու քնար
Ես ալքեզի պէս զաշխառհ
Պանդուխտ քայլով չափեցի
Ծաղկունիք ծըլին սոսկ քեզի—
Չեկաւ զեփիւռ . մ' անուշիկ
Շոհել իմ դէմքս յուսալիք :

Հող մ'ունէի հայրենի—
 Դըրախտ շքեղ աշխարհի
 Աւերակացն արդ պահպան
 Քիւրտն եւ անոր հրացանն—
 Ցուցուր ժանտից , ո՛լուսին
 Զազիլ ոսկերք Վասակին :

Ազգ մ'ունէի այն Հայն էր
 Որ երկրիս վրայ տարութեր
 Կ'երթար օտար ազգերէն
 Մուրալ լեզու եւ օրէն—
 Լուսին , ցուցուր Պու Հայուն
 Փառքն իւր նախնեաց շիրմերուն :

Սիրտ մ'ունէի—ան կոյսն էր
 Որ իմ հոգիս էր գրաւեր—
 Ծաղկէ հասակ ծաղկի դէմք—
 Հուր աչքն առին շիրմանց վէմք
 Մեր պանդուխտն ալ—լուսին
 Պու այցելու ել շիրմին :

Τ Σ Α Ν Τ Ι Σ Τ

Ε Ε Ρ Ρ Ο Ρ Τ Σ Π Ρ Ε Τ Α Ρ Ζ Τ

Ι. Ζ Φ Α Θ Τ Η Σ Α Ζ Σ Τ Α Ν Α Τ Ρ Ο Κ Θ Ε Α Τ

Φ. αρπιτάν ζαյαστανάν παյ δαղկαպսակ

Ζαյն πηζοւնելու ելξ' բ Հայ ղաւակիք

Անցան սեւ օրեր, օրե՛ր մահահոտ

Հայոց նոր բաղդի ծագի առաւօտ

Սահմանադրութիւնն ուղեցոյց կենաց

Աիրոյ դրօշակով եկաւ զարդարուած

Որ փայլի՛ Արեւ սուրբ Հայաստանի

Որ Հայ Աղդութիւնն փառօք վերածնի՛

Կեցցե՞ն անձնուէր որդիք Հայկազուն

Կեցցէ՛ Աղդային Սահմանադրութիւն :

Կաթիլ մ'արտասուք հեղունք աննախանձ

ի սուրբ յիշատակ մեր քաջ նախահարց

Կաթիլ մի քրտինք հեղունք անխնայ

ի նպաստ Աղդիս յուսոյն ապագայ

Եւ ոչ իսկ խնայե՞նք բոլոր մեր ճգունք

Կրօնի Հայրենեաց եւ Աղդի սիրոյն :

Որ փայլի՛ Արեւ եւայլն :

Հայեր, միանանք, կ'ընենք առաջուր
Ամէն ոժ եւ նենդ, պարխսպներ ամուշ
Երկինք զայս մեր ուրբ կ'օրհնէ Սիոնթիւն
ի Աստուած Գրիգորի զօրավիդ արթուն
Հաղա խրախուսինք, կործ տանք անվեհեր
Ընկճենք, կործանենք ամեն արդեկքներ:
Որ փայլի՛ Արեւ եւայն :

Ունինք սիրո արի, ոգի եռանդուն
Ժառանդ մնացած բազուի աննըկուն
Դարերու յաղթող Ազդի զաւակենք
Ամէն նախատինք օ՞ն փութով Զնիցենք
Անմահ Հայութեան կանգնենք յաղթանակ
Հայոց Մօր ճակտին հիւսենք պերճ պատի՛
Որ փայլի՛ Արեւ եւայն :

Ս . Պ . Պ . ՓԱՓԱՋԵԱՆՑ

Ի ՄԻՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՅ

Ահա հրեշտակ սկեփետուք թուցալ
բարձուսա երկնաճէմ,
Հայոց բաղդին հեծեալ ի կառս բարձր
գոչէ զուարթագէմ.

Հզօր պատգամ
ի վերուստ դամ
Միութիւն հայք
Եւ նոր ձեզ կեանք :

Տրոփեն ուժգին եւ լանջք եւ սիրու。
Խաղայ արիւն ի թինդ ի թինդ ,
Մեղք կաթէ Սուրբ սէլն ի խինդ
ՀԱռաքինոյն ի Հայու սիրո

Սիրաբորբոք ամբոյրք բղխեն
Արտասուաթոր աչկունք ցողեն :

Արիք Հայկազունք
Իսէլ փութասցուք ,
Եռանդուն մատիք
ի համբոյր հեղիկ
Տուք համբոյր մի եւս
Բացէք զձեր թեւս
Տուք համբոյր մի եւս
Սիրոյ է պարզեւս :

Կեցցեն յաւերժ վեհ Հայկազունք
Անմահութեան սիրուն սերունդք
Կեցցէ յաւերժ Հայկայ ողին
Մեզ են վկայ երկիր երկին :

1008
38/26

Անկաւ պարիսսպ ժամտ նախանձուն ոչ ի-
շանթից ահարկու
Այլ յակնարկի եւ եթ սիրոյ վերաստացեալ
կենսատու

Երկին երկիր
Կան ի յակճիռ
Ընդ Հայ պղղիս
Բիւր հրաշալիս

Բայցին անդունդք սեաւ անյատակ
Ծածկել զբաղդին հին յիշատակ
Տիեզերաց բայցին մատեանք
Անդէն դրոշմել Հայոց պարծանք
Կեցցէ Հայոց սէր պանծալի
Բերող փառաց նախանձելի :

Արիք Հայկազունք
Ի սէր փութասցուք և՛ և՛

Գ . ԱՊՏՈՒԼԱՅ

Եյ սէրվէրի կերտուն մէդամ
Վէյ ատվէրի տարա զիւլամ
Սայէի տալինտէ ճիւմլէ
Միւկք ու միլլէթ պուլտի նիղամ:

Ապտ-Խւլ-Ազիղ Շահի ճիհան
Օլուն ճիհանտէ քեամըրան
Շէվքէթիյլէ հէմ պէր տէվամ
Էյլէ եարապպը միւոթէան :

Շան ու շէվքէթիյլէ հէր ան
Թապ'ը Շահի օլա ֆէրհան
Պէօյլէ ըխլաս իլէ հէր կիւն
Օլուր էվրատը պէնտէկեան :

Ապտ-Խւլ-Ազիղ Շահի եւայլն;
Մարտէմինլէ սէնին Շահա
Ճիհանի եյլէտին իհեա
Իշթէ միլէթծէ եէկղէպան
Իթմէքտէիղ շիքրիւն իյֆա :

Ապտ-Խւլ-Ազիղ Շահի ճիհան .

Գըլուպ օլտավէրի սէյլիտ
Նիղամը միլէթի թէճտիտ
Հէման օլ Շահը զիյշանըն
Օլա հէր ըուզի եէվմի իյտ :

Ապտ-Խւլ-Ազիղ Շահի ճիհան .

ԱՐԱՔՍԻ ԱՐՏԱՍՈՒՔԸ

**Մայր—Արաքսի ափերով
Քայլամոլար գնում եմ,
Հին հին դարուց յիշատակ
Ալեայ մէջը պարում եմ,**

**Բայց նոքա միշտ յեղյեղուկ
Պղտոր ջրով եղերքին
Դարիւ դարիւ խիելով
Փախչում էին լալագին .**

**Արաքս՝ ինչու ձկանց հետ
Խաղ չես բռնում մանկական ,
Դու գեռ ծովը չըհասած՝
Սգաւոր ես ինձ նման ,**

**Ինչու արցունք ցայտում են
Քու սէդ հպարտ աշերից
Ինչու արագ փախչում ես
Այդ հարազատ ափերից .**

**Մի՛ պղտորիլ յատակդ ,
Հանդարտ հսկէ խայտալով ,**

Մանկութիւնը քու կարճ է ,
Շուտ կը հասնիս դեպ ի ծով :

Վարդի թփեր թող բուսնին
Քու հիւրընկալ ափի մօտ ,
Սոխակները նոցա մէջ
Երգեն մինչեւ առաւօտ :

Մշտադալար ուռիներ
Սառ ծոյի մէջ քու ջրին
Ճկուն ոստըն ու տերեւ
Թող թաց անեն տապ օրին :

Ափերիդ մօտ երգելու ,
Հովիւք թող դան համարձակ .
Գառն ու ուլը քու վճիտ
Ջուրը մտնեն միշտ արձակ :

Մէջը ուռցուց Արաքսը ,
Փրփուը հանեց իւր տակից ,
Ամպի նման դոռալով
Իսպէս խօսեց յատակից :

«Խիզախ , անմի՛տ պատանի ,
Նիրհըս ինչո՞ւ դարեւոր

Վրդովում ես , նորոգում
իմ ցաւերը բիւրաւոր :

Սերելիի մահից հետ ,
Ե՞րբ ես տեսել որ այրին
Ոտից դլուխ պճնուի
Իր զարդերով թանկադին :

Որի համար զարդարուիմ
Որի աչքը հրապուրեմ
Շատերն ինձ են ատելի ,
Շատերին՝ ես օտար եմ :

Կար ժամանակ որ ես էլ
Շքեղազարդ հարսի պէս ,
Հազար ու բիւր պչըանքով
Փախչում էի ափերէս :

Յատակըս պարզ ու վճիռ ,
Կո հակներըս ոլորուն ,
Լուսաբերը մինչեւ յայդ
Զըիս միջին էր լողում :

Ի՞նչս մնաց այն օրից
Ո՞ր ջրամօտ դեղերս ,

ՈՌԸ ԵՄ ՀԵՆ Քաղաքից ,
ՈՌ ԲԵՐԿՐԱԼԻ ՄԵՂԵՐՄ :
ՄԵՐԸ ՋՐԻ Ամեն օր
Իր սուրբ ծոցէն Արարատ ,
Մայրախնամինձ մնունդ
Պարգևում է լիառատ :

Բայց ես այն սուրբ ջրելով
Սուրբ Ակոբի աղքիւրին
Պիտի ցողեմ արտօրայք
իմ առելի օտարին :

Կամկենսատու իմ ջրով,
Ափերիս մօռ կը կղած
իր աղօթքը կատարէ
• • • . • . • . • . .

Վենչ իմորդիք (ով գիտէ)՝
Ծարաւ, անօթի, անտերունչ,
Օտար աշխարհ յածումեն
Թոյլուքերով կիսաշունչ : . . .

Հեռու հեռու քշեցին
բնիկ ազգը իմ Հայկեան ,

Նորա տեղը ինձ տուխն
 Անգութ խուժանն Պարսկեան
 Գոյա համար զարդարեմ
 իմ հիւրընկալ ափերը ,
 Եւ կամ դոյա հրապուրեմ
 Ճպուռտ պլշած աչերը :
 •Քանի որ իմ զաւակունք
 Էսպէս կու մնան պանդուխտ՝
 Զիս միշտ սղւոր կը տեսնէք ,
 Այս է անխաք իմ սուրբ ուխտ .
 Եւ չխօսեց Արաքսը ,
 Յորձանք տուեց ահագին ,
 Օղակ օղակ օձի պէս
 Առաջ սողայ մոլե դին :
 ՔԱՄԱՐ ՔԱԹՈՊԱ

ՅԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ
 1862 ՄԱՅԻՍ 24

ՈՂՀՈՅՆ.ՔԵՂ ո՛ դաշտ եւ սիրուն ափունք
 Ուր այսօր սիրով խմբին Հայկազունք .

Հարց Հայաստանեաց սրբազան աճիւնք
Թո՛ղ ցնծան Հայոց ի սուրբ միութիւն .
Հեղ Հայաստանի եմք մեք զաւակներ,
Հայեր զձեղ հոս , հոս կոչողն է սէր
Եւ հայրենիք՝ սուրբ Հայրենիք :

Հընշտակն Հայկազանց

Հոս կը սաւառնի .

Յառաջ , պսակաց

Ճակառք արժանի :

Սահմանադրութիւն ,

Սահմանադրութիւն ,

Ցորչափ մնայ երկիրս եւ դու

Կեցցեն :

Առ Հայրենեաց սէր

Որդիք անձնանուէր

Ի շինութիւն տանն Հայկազանց,
Կեցցեն :

Ոգին միութեան

Որ զմեղ միաբան

Հոս դումարեց սիրոյ հանդէս

Կեցցէ :

ՆՇԱՆ ԶՕՀՐԱՊԵԱՆ

Գ Ա Ր Ո Ւ Ն

Ո՞հ ինչ անուշ եւ ինչպէս զով
 Սուաւօտուց վչես հովիկ,
 Շաղկանց վրայ գուրգուրալով
 Եւ մազերուն կուօին փափկիկ .
 Բայց չես հովիկ իմ Հայրենեաց ,
 Գնա՛ անցիր սրտէս ի բաց :
 Ո՞հ , ի՞նչ աղու եւ սրտադին
 Շառոց մէջէն երգես թռչնիկ ,
 Սիրոյ ժամերն ի յանտառին
 Ըղմայլեցան ի քոյ ձայնիկ .
 Բայց չես թռչնիկ իմ Հայրենեաց ,
 Գնա՛ թռի՛ր սրտէս ի բաց :
 Ո՞հ , ի՞նչ մըմունջ հանես վտակ
 Ականակիու եւ հանդարտիկ .
 Քու հայելւոյդ մէջ անապակ
 Կային զիրենք վարդն ու աղջիկ .
 Բայց չես վտակ իմ Հայրենեաց
 Գնա՛ հոսէ սրտէս ի բաց :
 Թէպէտ թռչնիկ եւ հովի Հայոց
 Աւերակաց թռչին վերայ

Թեպէտ պղտոր վտակն Հայոց
 Նոճիներու մէջ կը սողայ,
 Նոքա հառածչք են Հայրենեաց :
 Նոքա չերթան սրտէս ի բաց :

Մ. ՊԵՂԻՔԹԱԾԼԵԱՆ

ԱՌ ԱՍԴՆ ՀԱՅՐԵՆԵԱՑ

Մեր սիրուն հայրենեաց
 Բեւեռը շողշողող,
 Մեր սիրուն քաջաղանց
 Աճիւններն ցարդ հսկող,
 Պայծան ասող որ այժմիկ
 Լոյսդ կ'ընես թափանցիկ,
 Մինչեւ Հայ պանդխոց
 Արտելուն կուտաս բոց,
 ՈՎ քաղցր Յոյս, դու միսիթար,
 Տարագիր Հայոցս թշուառ
 ի'նչ աշխոյժ նոր ի նոր,
 ի'նչ աշխոյժ ոգեւոր
 Կ'արծարծես սրտերնուռ,
 ՈՎ Հայոցս միակ Յոյս :

ԶԵՇ, աԼ ՀՎՀԱՄԻՆՔ ԲՆԱՌ ՈՎ ՀԱՅԵՐ ,
ՄԵՂ.ՔԱՋԱԼԵՐ ԵՆ ՅՈՒ Եւ ԺԱՄԱՆԱԿ .
ՉԵՇ աԼ ՀՎՀԱՄԻՆՔ ԲՆԱՌ ՈՎ ՀԱՅԵՐ ,
ԺԱՄԱՆԱԿԻՆ ՀԵՄ ՅԱռԱՎ ԸՆԹԱՆԱՆՔ ,
ՅԱռԱՎ ԸՆԹԱՆԱՆՔ , ՀՈՆ ուր հՐԱւԵՐ ,
ՀՐԱւԵՐ կարդան մԵՂ նախահարց ասողեր .

Թէ Հայկայ որդիք եմք
Թէ Հայկայ արիւն կը եմք
Ամենքս ալ 'ի սուրբ սէր
Հայրենեաց 'ի նուէր,
Քաջ որդիք պանծալի
Ըլլամք միշտ արժանի :

Ա . Պ . Պ . ՓԱՓԱԶԵԱՆՑ

ՅԱՐԱԳԻՆ ՏԱՐԵՎԱՐՁ

Ա.ԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ

(Heavy jacket fabric, upper and lower)

1861 ՄԱՅԻՍ 24

Արիք Հայկազունիք, յառաջ ընթանանք,
Սահմանադրութեաննոր բարեւ մ'ալ տանք

Որ Ազգն երբ զԱնի փրկարար դոչեց :

Նոր հոգի , նոր կեանք Անոր պարդեւեց :

Եկեք բարեկամք , առ բարձրեալ Աստուած :

Ուղղենք մեր մաղթանք սուրբ սրտէ բղխած :

Կեցցէ , Կեցցէ , Կեցցէ միշտ

Ազգն ու Սահմանադրութիւն :

Զըկանք , բռնութիւն վատթար վարչութեան
բերին մահն է դուռն Հայոց աղդութեան .

Սահմանադրութիւնն եկաւ զայն վանեց
Եւ կենաց ուղին մեր առջեւ հարթեց :

Յառաջդիմութեան բացաւ ասպարէզ

Ուր ամեն վայրկեան դոչել պարտ է մեզ

Կեցցէ , Կեցցէ , Կեցցէ միշտ

Ազգն ու Սահմանադրութիւն :

Ջնջեց ամենայն կարծիք անձնական

Խեղդեց ամենայն ձայն անհատական ,

Հրաւէր կարդաց Աստուծու ձայնին

Սուածնորդ լինել դործոց աղդային :

Այն որ Աստուծու ձայն տուաւ մեզի ,

Մենէ թող առնու ձայնով մայնսլիսի .

Կեցցէ , Կեցցէ Կեցցէ միշտ

Ազգն ու Սահմանադրութիւն :

Հայերս անարդված դրկեց բարձրացուց
 Մարդկային կոչման մեզ արժանացուց .
 Շնորհեց մեզի , զոր ազատն Սպոռած
 Մարդկութեան երկըորդ նշանն է դրած .
 Ալուն շնորհով յարդ ստացանք մենք ,
 Անոր յարդ տալով ապրինք ու երգենք .
 Կեցցէ , Կեցցէ , Կեցցէ միշտ
 Աղջն ու Սահմանադրութիւն :
 Գուն ալ Հայաստան , սիրուն Հայրենիք ,
 Ալ այսուհետեւ մի սրդար լոիկ :
 Զի ալ քու որդիք նոր ոգւով բերկըեալ
 Զքեզ հարս կուզեն տեսնել զարդարեալ .
 Ալ մի' լար մայրիկ լայդ ի պար փոխէ
 Եւ ձայնով քաղցրիկ որդւոյդ հետ երգէ
 Կեցցէ , Կեցցէ , Կեցցէ միշտ
 Աղջն ու Սահմանադրութիւն .
 Հայեր , միանանք մեր մօրն հետ օրհնենք
 Զանոնք որ մեզի տուին սուրբ օրէնք ,
 Սահմանադրութեան բարեայ փոխանակ
 Թող վարեն ուրախ կեանք մի փառունակ
 Թող եւ մեր որդիք հետ անոնց անուան
 Բիւրաւոր տարիք օրհնեն ու կարդան

Կեցցէ , Կեցցէ , Կեցցէ միշտ
Աղջն ու Սահմանադրութիւն :

Յ. Գ. ՍԸՎԱՃԵԱՆ

ԱՌ ՀԱՅԱՍՏԱՆ

Ի Ղ Զ

Ո՞ւ ընկալ' ի գիրկդ մայրդ Հայաստան :
Զորդիս քո սիրուն ցրուեալ աստ եւ անդ ,
Տես՝ ինչպէս սիրովդ եւ քու կարօտովդ ,
Վառուած բորբոքած քու տեսոյդ ցանկան :

Արի կայ ուրեմն ով մայր Հայաստան ,
Կոր ոգի զգեցիր փառօք անվախճան :
Օն զրահաւորիմք ով որդիք Հայկեան
Մեր մօր արցունքներն ջնջելյաւիտեան ,
Զօրանանք սիրով եւ սուրբ միութեամք ,
Էլլալ ախոյեան ընդդէմ թշնամեաց .

Հապա գործելու ժամանակն հասաւ ,
Հայրենասիրին կայ փառք անզըռաւ :

Տ • ՓԱՓԱՃԵԱՆ

ՅԱԿՈՒՅ ԳՈՐԾԱԴՐՈՒԹԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՍՈ. ՀՄԱՆՍԴՐՈՒԹԵԱՆ

24 ՕԳՈՍՏՈՍ 1860

Հայրենեաց սիրով վառուած վեհ սրտեր
 ի՞նչ կը յապաղէք ելնել 'ի հանդէս .
 ի՞նչ կը յապաղէք . — սիրո կը դիմանայ ,
 Սիրո որ ազգասէր ըլլալ կը ցանկայ ,
 Տեսնել հայրենեաց այսքան բիւր աղէտ ,
 Եւ դու անտարբեր ցարդ մնալ յաւէտ :
 Խեռ ատելութեան եւ չար նախանձու
 Սերմերն ու ոդին հեռո՛ւ մղենք հեռու .
 Սիրո սրտի կապուած , թեւ թեւի տուած ,
 Հայրենեաց սիրոյ ասպարէղն բացուած .
 Օն վաղենք յառաջ 'ի սուրբ խաչն վստահ ,
 Օն երթանք յառաջ , եւ անձնանուէր՝
 Հայրենեաց օդտին ըլլանք ուխտանուէր .
 Հսիյ մի վհատիր , սիրո առ եւ սիրո տուր ,
 Տկարք զօրանան , քաջք խրախուսին ,
 Վատերը բացուին , վատերը զատուին '
 Ճշմարիտ Հայերն յառաջ թող անցնին .
 Խաչ , սէրն են նշան ճշմարիտ Հայուն

խաչ, սէրն են պարծանք ճշմարիտ Հայուն .

Սիրոյ դրօշներ

Թող արդ պարզուին ,

Հաշտութեան ձայներ

Թող արդ հնչուին .

Հայն մէկ սիրտ եղաւ

Սիրով միացաւ

Սուտ են որ ըսեն

« Հայք զիրաք կատեն »

Սուրբ Արարատեան մայր աթոռոյն գիրկը ,
Եկէք , հայկազունք եկէք միանանք .

Եւ սփոփենք մեր վշտացած մօր սիրու ,

Օրհնելով Տէրը , որ զմեզ պարզեւեց

Մեր Ազգին կապն ու հոգին ,

Ազգային Սահմանադրութիւն

— Յաւերժասցի արդիւնաւէտ :

Ս . Պ . Պ . ՓԱՓԱԶԵԱՆՑ

ՊԱՐԵՐԳ

Ո՛Տ ինչ անուշ ինչ գեղեցիկ ,
Մեր Հայրենեաց զեփիւոիկ ,

Ճնչէ զուարժ մեր սրտերուն ,
Տալով աշխոյժ զօրութիւն ,

Առ ինքն կոչէ զմեղ Հայեր,
Գդուելյիւր ծոց ծնելասէր ,

Պար խմբելով երթանք լեռ ձոր ,
Համբոյր սիրոյ տալ մեր մօր :

Հոն պարզ վճիտ եւ գեղեցիկ ,

Մեր Հայրենեացըն աստղիկ .
Հորիզոնէն արդ բարձրացած .

Կուտայ Հայոցս յոյս փառաց ,
Անոր ուղղենք արդ մեր աչեր ,

Անով վառուինք ով Հայեր :

Պար խմբելով երթանք լեռ ձոր ,
Համբոյր սիրոյ տալ մեր մօր :

ԱՌ ՀԱՅԱՍՏԱՆ

Հայաստան երկիր դրախտավայր ,

Դու մարդկայնոյ ցեղիս որրան ,

Դու եւ բնիկ իմ հայրենիք ,

Հայաստան , Հայաստան , Հայաստան :

Ի վեհ անունդ սիրտ իմ ո՛հ յոյժ ,
Ողեւորի ի նոր խրախոյս .

Եւ անձկայրեաց ի քեզ յուսամ ,
Ի քեզ ի քեզ յոյս իմ միայն .

Հայաստան , Հայաստան , Հայաստան :
Հայաստան անուն փարելի ,

Ի քեզ հանդիստ Կոյեան տապան ,
Եգիտ եւ քեւ ապրեցաւ Կոյ ,

Հայաստան , Հայաստան , Հայաստան :
Գետք բաջառաշը աղենաբուղիս ,

Զհողդ բարի առնեն յուռթի .

Քեւ ապրիմ ես , քեւ միշտ ցնծամ ,

Քեւ , քեւ պանծամ փառք իմ միայն ,

Հայաստան , Հայաստան , Հայաստան :
Հայաստան ծնող դիւցաղանց ,

Եւ հրաշալեաց հանդիսարան .

Քո զեփիւոին քաղցր է շնչիւն ,

Հայաստան , Հայաստան , Հայաստան :
Հայկ , Արմենակ , Արամ , Տիգրան ,

Տրդատ , Ամբատ , Վարդան , Վահան .
Զոր շնչեցին եւ զօրացան ,

Զքեղ յիշեմ զքեղ սիրեմ .

Զ.քեզ, զքեզ, սէր իմ միայն,
Հայաստան, Հայաստան, Հայաստան,

Յ. ՄԻՐԶԱ ՎԱՆԱԴԵՅԻ

Ի ԹԱԳԱԻՈՐՈՒԹԻՒՆ ՏՐԴԱՏԱՑ

ՅԵՏ ԲՈՒԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՍԱՍԱՆԵԱՆ

Յազատն ի վեր ի Մասիս
Արիք որդիք հայկեան
Ճռուեալքդ ի մի խումբ պարու
Բառից հողմոց փող ազդու
Յաստուածախրախոյս ձայն :

Նախնի կամար բազմերփեան
Ահա պատի զնովաւ
Ամպրոպայոյզ մըրըրկաց
Հաշտարան պատերազմաց
Տարիալին ցոլացաւ :

Զայն որոտաց ձայն ահեղ
Խորանաձեւ յարկէն
Արիագունդ տուն Հայկայ

Զտապալեալ գահիդ արքայ
Վերականգնեմ անդրէն :

Երդուեալ յաղեղն երկնածիր
Բարձի զբաղդ ձեր ի միտս
Թաթ ձեր յեթեր սըլացաւ
Հակառակորդն սուզաւ
Վայր սանդարամետս :

Դիւցաղանց պար Թորդոմեան
Տըխրազգեաց յե՛ղիսեանս
Ըզ լրթագոյն դիմաց մէգ
Յաստեղաց բոց վառին շէկ
Յաւետեաց հրաւիրանս :

Ա.րդ իմ արի սպառազէնք
Տուք կայթս հսկայաքայլ
Դաշտք ի պղինձ բոցաոյին
Լերինք ի նշոյլ շլասցին
Զոկատիցդ, ի զեռալ :

Ահա ձեզ Հայկ երկնածեմ
Հայր ձերում բանակի
Սսպարափակ հովանեաւ

ԶՃԵԾՔ ի բարձանց փարեցաւ
ԱՆԺԱԽԱՆՑ ՆԻՂԹԱԼԻ :

Խումբ պար առեալ զարքայիւ
ԶօՐԱՎԱՐՔ ԱՐԱՄԱՅ
ԲՈԼՈՐԵցէք Համերամ
Պսակ փառաց անթառամ
ԿԵցցէ ՏՐԴԱՌ արքայ ,

ԱՌ ՀՈՅԱՍՏԱՆ

Հայաստան քաղցր իմ Հայաստան
Ողիքս յանունդ հալեցան .
Մինչեւ ցերք ես պանդոխա ,
Սըտիս իմ երք լցցի ուխա :
Արդեօք աչքս անձկալից
Ելբեմն զքեղ տեսցեն .
Աչքս այս արտասուալից
Ելբէք դադարեսցեն .
Շուրջն իմ ի հողդ կենսաւոր
Տացէ զհամբոյլն ուխտաւոր .
Արդեօք դլուխս վրշտակոծ

Հանդիցէ քոյդ ի ծոց :

Հայաստան սէր իմ Հայաստան :

Ողիքս ի տենչդ հալեցան :

Մինչեւ ցերը ես ի քէն պանդուխտ

Սրտիս իմ երբ լցցի ուխտ :

ԽՈՐԵՆ ՎԱՐԴԱՊԵՏ :

ԱՌ ՍԷՐ Ի Մ ՀԱՅԱՍՏԱՆ

Օտար երկիր թափառած

Անքուն աչօք կամ ցաւած

իմ սիրելոյս կարօտցած

Չը կայ մէկն որ կարեկից

Ըլլայ ցաւած իմ սրտիս :

Ով հայրենիք իմ սիրուն

Ահ , տոչորէ զիս անունդ

Արդեօք պիտի չըտեսնեմ

Քու լուսափայլ զուարթդեմքդ :

Հառաջանք բիւր 'ի սրտէս

Արտօսը հեղում աչերէս

իմ սիրելոյս կարօտցած

ԶԵՆ ինձ երբէք մըխիթար
Ոսկի պատիւ սէր օտար :

Այլ ես անոր սիրուն զոհ
Կ'ընեմ զամենքն որտով գոհ
Միայն թէ յոյս մ'ունենամ
Իմ սէրս տեսնել միանգամ :

ՄԱՐՏ

Մնասցես բարեաւ սէր իմ սէր
Հրաւէր մարտին որոտաց
Թէ չեմ քաջաց ես ընկեր
Չըկայ բաժին ինձ փառաց :
Մի լար հոգւոյս իմ հատոր
Գուցէ դառնամ ոհ մի լար
Թ'անկայց մարտին ես 'ի գոռ
Տեսցուք յերկրին մեք զիրեար :
Եղբայրադաւ չէ նախանձ
Որ բորբոքեալ յիս վառի
Ի սուրբ հողոյ Հայկազանց
Բառնամ ըզլուծ օտարի :

ԵՐԳ ՈՒ ԲԱԽՈՒԹԵԱՆ

Ահա բաժակ ուրախութեան
ի սէր յաւերծ միութեան
Զի՞ վայելուչ՝ որդիք Հայկեան
Մէկտեղ հրճուին եւ ցնծան

Կեցցէ սէր եւ միութիւն
Կրեմք մի սիրտ մի արիւն :

Վերցուր աչքըդ յերկնից կամար
Փայլի հեռուն աստղ մի պայծառ
Եւ դու ո՛ Հայ զարթիր սիրտ առ
Հայոց բաղդըն ալչէ խաւար :

Կեցցէ սէր եւ միութիւն
Կրեմք մի սիրտ մի արիւն
Բա՛ւ է այսչափ բաժանում
Ըլլամք ուրախ եւ խնդում
Նախանձ, վրէժ, ձեղ թողում
Անդունդիք եւ վիհար անհատնում,

Կեցցէ սէր եւ միութիւն
Կրեմք մի սիրտ մի արիւն :

Փորձ մը ըրինք բաժանման
Փորձ մ'ալ ընենք միութեան

**Լեցուի փափաքդ Հայաստան
Տես որդիք քո միանան :**

Կեցցէ սէր եւ միութիւն
Կըեմք մի սիրտ մի արիւն :

Ինչ եւ ընեմք ինչ կերպ առնեմք
Ո՞չ չըդիտեց թէ մեք Հայ եմք
Ո՞վ չըդիտեր թէ եղբայր եմք ,
Արիք ծիծաղ դիմօք երդեմք :

Կեցցէ սէր եւ միութիւն :
Կըեմք մի սիրտ մի արիւն

Ո՞ր բռնաւոր ո՞ր օրէնքներ ,
Կը պատուիրեն թէ մի սիրեր
Ողգիդ օդուտն ու բարիքներ :
Սիրոյ գահն է յերկինս 'ի վեր

Կեցցէ սէր եւ միութիւն
Կըեմք մի սիրտ մի արիւն :

Ի ՄԱՀ

ԳԱԲՐԻԵԼԻ ԵՐԱՆԵԱՆ

Քու ցուրտ շիրմիդ վրայ ուր վահ , կայ թաղու
Առոյդ հասակդ եւ սրտիդ հուր երկնասլաց

ԶԵ ԹԵ միայն սփռենք ծաղիկը լի ձեռքով
ԶԵ ԹԵ միայն արցունք անհուն ցաւերով ,

Այլ եւ ձօնենք վշտահար
Երգերն անուշ Քընարին
Ուոյ փախուկ թելերը
Դու հիւսեցիր սրտադին :

Այն նըւագներն որ քու բերնէդ որլացան :
Երթալյողյն աւերակաց ցիր եւ ցան
Լըսեց զանոնք 'ի դամբանացն հայրենի
Եւ ախովեցաւ Հայաստանեաց վեհ ողի

Լսէ զամնոնք եւ դու այլ
Մահուան քունէն արթնցիր
Այն քնարին թեւերով
Յանմահութիւն ելթոիր :

Մ. ՊԵՏՐՈՎԸՆԵԱՆ

ՄԱՂԹԱՆՔ ՎԱՅՆ ԱԶԳԻՆ
Տէր կեցո դու զհայս ,
Եւ արա զնոսա պայծառ ,
Կեցո զհայս ,

Զողորմութիւնդ վերին ,
Հաճեաց ձօնել նոցին ,
Զի նովիմք մարդասցին

Ապրիլ յաստիս :

Ով տէր մեր տէր փութա ,
Զազդ մեր համայն փրկեա ,
'ի թշնամեաց :

Կափր զաչս նոցուն ,
Հառ զարմատոյ զբուն ,
Եւ զազդ մեր արտասուն ,
Արա հզօր :

Աջովդ համատարած
Զազդ մեր արտահալած :
Փոյթ գումարեա

Աշխարհ արարատեան
Ի վայր մեր ծննդեան
Որ այժմ է սեփական ,

Օտար ազդաց

Ի քո իջեալ տեղի
Զաթոռ հայրապետի
Մեր հաստատեա

Զերկարութիւն կենաց
Հօր մեր աստուածաղղեաց
Շնորհեա պետին մեր հարց
Որ զմեղ հովուէ :

ԵՐԳ. ՀԱՅՐԵՆԻ

Մինչդեռ յուսով խայտայ բնութիւն
Յետ դառնաշունչ ձմերայնւոյն
Եւ ի գաւառն իմ հայրենի
Գեղածիծաղ դառնայ դարուն :

Մինչ բոյր ի բոյր վթիթ ծաղկունք
Եւ ճոռողեն նորեկ ծիծունք
Իքեղ ես դարձ առնում յայնժամ
Ով ցանկալիդ իմ Հայաստան :

Ոչ Հելուետեան ինձ դաշտավայր
Եւ կամ զուարթ մարդագետին
Ոչ քան զքեղ չընաղաղեղ
իտալական պայծառ երկին :

Հեռի ի քին պանդուխտ գոլով
Քոյովդ յար տապիմ անձկով

Ի խանձարուրդ իմոց կենաց
Ով Հայաստան առնումքեղ դարձ։
Գայցեն աւուրք ուր մանկութեան
Անկցի տիոցս իմ գեղ դալար
Եւ յինէն խոյս տացեն վայելք
Կենաց թեթեւ ի դարշապար։

Ուր հեք մուսայս մատն ի յերեր
Մոռանայցէ երդել զսէր
Զնինջ ի ծոցդ առնում յայնժամ
Ով ցանկալիդ իմ Հայաստան։

Մ · ՊԵՏՐՈՎԱՆԻԱՆ

ՊԱՐԵՐԳ

ՎԱԼՅ

Ի խումբ 'ի պար
Հայրենասէր պանդուխո Հայք
Ի թինդ մեր ոտից թող Մասեաց բարձունքն
Ահեղագոչ

Առ Հայս հանուր տան դանդիւն,
Հրաւէր կարդալհայ դիւցազներուն

Ի խումբ ի պար
Ով հայրենեաց քաջ որդիք
Մեր ոտից տրոփիւն բարէ թնտացուց
Ակնկալու

Հայ որտերն բոցակէզ
Յաղթական վառաց խմբել զհանդէս :

Ս. Պ. ՓԱՓԱՉԵԱՆ

ԳԵՐԵԶՄԱՆՔ ՀԱՅՈՑ

Լուռ եւ տխուր դաշտեր գեղեցիկ
Քաջ որերոյն աճիւններով դեռահեղ
Ուր սուրբ շիրմաց ծածկէ տեսիլ խաղաղիկ
Զարմենազան հազար ծաղիկ գունագեղ :

Աւաղ Հայոց արեւուն
Աւաղ Հայոց քաջերուն
Ուրոց կրեմք մեք արիւն
Օրհնեալ է Հայք, Զեր անուն :

Ով վեհնախնեաց կտրիճ եղբարց սուրբ շիրիմ
Զայն մը տուէք, որ մեր արտասուքը ցամքի

Վանկ մը հերիք ցաւած սրտիցս որ բերկրիմք
Մեզ ժըպոեցէք շիջեալ աստ Հայրենի :

Աւազ Հայոց եւայլն :

Բայէք, բայէք մամուռտ սաբորք սրբակիրք
Ցուցէք քաջացն ոսկերոտիքն համբուրենք
Եւ համբուրէ մեր եւ սդաւոր Հայրենիք
Մեք հարազատ որդիքս ողբամք ու երդենիք :

Աւազ Հայոց եւայլն :

Գետք Հայրենիք քան ի Զեզ կան ալիք
Եւ դուն, լուսին, քանի կանդեղդ վառ մնայ
Գուն ալ, սոխակ քանի ունիս դայլայիկ
Երգեցէք զՀայն, լրսեն սերունդք ապագայ :

Աւազ Հայոց եւայլն :

ՆՇԱՆ ԶՕՀՐԱՊԵԱՆ

ՊԱՐԵՐԳ

Հայկաղունք պար բռնենք
Թեւ ՚ի թեւ օն ելնենք
Ցնծութեան ձայներով
Եւ դուարթ սրտերով

Զի ահա 'ի նոր բաղդ
 Զայն կուտայ երկինք արդ
 Ի սուրբ կոչում ուխանմք հաստատ
 Անձնուէր գոլ պատրաստ :

Ս . Պ . Պ . ՓԱՓԱԶԵԱՆՑ

Ի ՀԱՆԴԵՍ

ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ

ԱՉԳԱՑԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Հըեշտակ Մասեաց մրտենիներ 'ի ձեռին
 Արդ մեզ ձօնէ համբոյր սիրոյ կաթոգին
 Մեղքը հոսին իր գեղեցիկ շրթունքէն
 Վարդեր ծըլին իր զուարթագին ժըպիտէն

Իւր մատունք կ'հիւսէն
 Դիւցազանց պերճ պսակներ
 Հայ բաղդին վրայ սփռեն
 Յուսաշող նշոյներ :

Յաւերակաց Հայաստանի երդ հնջեն
 Տան արձագանք այն սրտերուն որք քաշ են

Ալիք՝ զալիս հեղահամբոյր ողջունեն
Ծաղիկը՝ ծաղկանց թեթեւ թեւօք կ'գգուեն,
Այն քնքոյշ վարդենիք ·
Զոր Երկինք մեղ տըւին ,
Ո՛հ եղան հովանիք ,
Անմեղաց սեւ բաղդին ·

Հայուն սրտին խորին վերքերն թաղուեցան ,
Ժամանակին հզօր ձեռօք ՚իդամբան ,
Հայուն աչքին ալքաղցրանան դաւն արցունք
Սէր կ'հնչեն մինչդեռ իրեն պարզ ըթունք ·
Վարդանայ վեհ դափնիք ,
Թող նորէն ալ ծըլին .
Մինչ Հայկայ քաջ որդիք ,
Զուարթ երդեն Հայրենին .

Մեր արտասուաց մէջ մարեցան ով Հայեր ,
Աստուածային այն ահաւոր կայծակներ .
Երբ հաշտութեան ձայնք կրկնեցին ամեն
սիրոք ,
Երբ քաղցր աչօք մեղ ժպտեցաւ ոհ Երկինք ·
Անդ դարձաւ Աղաւնեակն ,
Տալով մեծ աւետիս ,

Զուարթ բերաւ յաղթանակն՝
Հաշտութեան վեհ Աղդին :

Զարթնունքաջերն ՚ի բնագաւառն՝ի հանդէս,
Ուր պերճ փառաց եղեւ որրանու ասպարէզ.
Հըմաի երկիր, ցնծան երկինք զուարթադէմ,
Մինչ դայյուսոյն չքնաղ հրեշտակ երկնաճէմ :

Երկնային զլւարթունք ,

Ո՞հ սիրոյ երդերով .

Կ՞նետեն մեզ ծաղկունք :

Անուշիկ նայուաժքով :

Անհուն վշտացդ մէջ տես Ոգիդ կուսական ,
Որդիքդ ինչպէսարցունքդ սրբել խոստանան.

Լանջք Հայկաղանց քաղցրիկ երդերդ կ'կրկնեն,
Հայոց կուսանքքայլերուդ սակ վարդք սրփ-

ուեն :

Բըարիոն մանուշակ ,

Ով սիրուն Հայրենիք .

Ոիտ՝ հիւսուին քեզ պսակ ,

Մինչ հաշտեն մեզ երկինք :

ՆՈՒԱԳ

ՉՈՐՐՈԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ

Ս.ԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԳՈՒԹԵԱՆ

Ա.

Ահայերկնից ժպտի Աստուած քաղցր առ
մեզ,
Մինչ ձիթենեաց ոստ՝ ի ձեռին դանք հան-
դէս.

Ուխտ՝ ի բագին սիրոյ՝ դնենք ո՞հ սիրոք մեր,
իշձք մեր թոջին թող՝ ի լուսոյ կամացներ :

Ամպերուն մէջէն,

Կիսանուաղ աստղեր .

Պըսակ մեզ սփռեն,

Ու զուարթ նայուածքներ :

Սանունք Արամեան օ՞ն առէք ի նուագ .

ԶՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ՝ Հայուն յոյսն ու
իառը :

Բ .

Զուարճացիք ոոդիք սիրոյ Հայութեան ,

Ահա ձեր ձայնք հասին երկնից ի խորան .
Փոխան փշոց՝ վարդք փթթեցան քո դաշտեր ,
Եւ իրաւանցդ արդար՝ սահման քեզ ետ Տէր :

Թող աչքերդ դադրին .
Արցունք ցողելէն .
Զի Հայկայ ճակտին ,
Աստեղք շողշողեն :

Որդիք Արամեան , ծագի՞ Արշալոյս
Դրօշմըն 'ի ճակատ երկնաճանչ ՅՈՇՍ ,

Գ .

Երբ յաւերակս լուռ հսկես մայրդ Հայաստան ,
Աչքերդ ուղղէ՛ , արդ՝ 'ի կամար աստուած
եան .

Տես աստղն Հայուն ինչպէս խայտայ լուսա
վառ ,

Կիաբերան օրհնէ՛ զորդիսդ վրկարար :

Օ՛ն Մուսայք Մասեաց ,
Ի մէջ դարերուն .
Հնչէք Հայկաղանց ,
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ :

Որդիք դիւցաղանց , օ՞ն դրկենք զիրար ,
Օրչնենք մեր Սուլթանն՝ աջաջ վեհափառ :

Ա. Յ. ԱՅՎԱԶՅԱՆ

ԵՐԳ. ԸՆԳՐԱՍԻ

Ակոռիխն մեծ կարստին բոլորտիքն են
բազմեր :

Աւագ իշխանք , ծեր պարոնայք ժողովք
են հոն կազմեր :

Այո՛ այո՛ ժողովք են հոն կազմեր :
Սաստիկ է վէճն մեծ է խնդիրն զոր հոն
տեղ կ'խորհին ,

Թէ ի՞նչ կերպով դարման մ'ընենք հիւանդ
մեր աշխարհին .

Այո՛ այո՛ հիւանդ մեր աշխարհին :
Մէկն այս կ'ըսէ մէկն այն կը՝սէ կծագի լոյսն
առառն :

Ինձ լսեցեք տեարք կ'կանչէ աւանին պետն
արթուն :

Այո՛ այո՛ աւանին պետն արթուն :

Թող թագն առնու կըսէ բագոս եւ վառօք
ապրի շատ.

Խոհ ցնծութիւնն ըլլայ դշխոյ եւ դահն ալ
յԱլտաշատ,

Այու այու եւ դահն ալ յԱլտաշատ :
Այսպէս մեզի նոր ցնծութեան արեւներ կը-
ծագին,

Առողջ կըլլայ մեր ժամանակ եւ նոր մեր
աշխարհին :

Այու այու եւ նոր մեր աշխարհին :

Ա. Ը Տ Ա. Ի Ս Ե Գ Դ

Ի Վ Ի Հ Ն Մ Ա Ս Ե Ա Յ

Գարունն էր կենացս դեռ
Երկինք ինձ նայեր հաշտ ,
ինձի համար ձորն լեռ
Կը ծաղկէր եւ դալար դաշտ ,
Թագն էր զարդն իմ վարսիս ,
Բաջաց մէջ էի պերճ ,

Շուտ զիս զրկեց Մասիս
Փառքիս վաղ հասաւ վերջ . . .

Հեծայ ի Սեաւ իմ վեհ
Անցայ լուրջ մարգերէ ,
Որսալ ի Գինայ դեհ
Յիու եւ պարարտ երէ :
Ողջոյն լերինք ու ձոր
Ողջոյն սուխն ծառեր ,
Անշունչ նիւթերն բոլոր

Լեզու էին առեր :
Բա՛րէ , յանկարծ կասեաց
Ոտք իմ աշխոյժ Սեւոյս ,
Կալան զիս Քաշք Մասեաց
Տարան ի վիճն անլոյս
Փախաւ , թռաւ արեւու ,
Ողբա զիս Սաթինիկ ,
Առ իմ վերջին բարեւու
Աղնիւ իմ Հայրենիք :

NL0015725

2013

«Ազգային գրադարան»



NL0015725

